



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգալթ թիվ. 23978/06)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

27 նոյեմբերի, 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է

27/02/2013

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Alvina Gyulumyan,

Corneliu Bîrsan,

Ján Šikuta,

Luis López Guerra,

Nona Tsotsoria,

Kristina Pardalos, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի նոյեմբերի 6-ին կայացած դռնփակ դատական նիստում կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2006 թվականի մայիսի 31-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տասնինը քաղաքացիներ պրն. Հայկ Խաչատրյանի («առաջին դիմումատու»), պրն. Տիգրան Աբրահամյանի («երկրորդ դիմումատու»), պրն. Նարեկ Ալավերդյանի («երրորդ դիմումատու»), պրն. Տարոն Այվազյանի («չորրորդ դիմումատու»), պրն. Հարազատ Ազատյանի («հինգերորդ դիմումատու»), պրն. Արթուր Չիլինգարովի («վեցերորդ դիմումատու»), պրն. Վաղարշակ Մարգարյանի («յոթերորդ դիմումատու»), պրն. Գագիկ Դավթյանի («ութերորդ դիմումատու»), պրն. Բորիս Մելքոնյանի («իններորդ դիմումատու»), պրն. Էդգար Չոեյանի («տասներորդ դիմումատու»), պրն. Էդգար Դիլանյանի («տասնմեկերորդ դիմումատու»), պրն. Վահե Գրիգորյանի («տասներկուերորդ դիմումատու»), պրն. Գարեգին Մելքոնյանի («տասներեքերորդ դիմումատու»), պրն. Աղվան Միլանյանի («տասնչորսերորդ դիմումատու»), պրն. Գերասիմ Միլանյանի («տասնհինգերորդ դիմումատու»), պրն. Հենրիխ Սաֆարյանի («տասնվեցերորդ դիմումատու»), պրն. Շալիկո Սարգսյանի («տասնյոթերորդ դիմումատու»), պրն. Արսեն Սևոյանի («տասնութերորդ դիմումատու») և պրն. Կառլեն Սիմոնյանի («տասնիններորդ դիմումատու»)

կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 23978/06 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել են փաստաբաններ պրն. Ա. Կարբոնենաուն, պրն. Ռ. Խաչատրյանը և պրն. Ռ. Կոհիհոֆերը, որոնք, գործունեություն են ծավալում, համապատասխանաբար, Պաթթերսոնում (ԱՄՆ), Երևանում և Վիեննայում: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2009 թվականի հոկտեմբերի 20-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատն ուղարկել Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1982, 1981, 1986, 1984, 1986, 1986, 1986, 1986, 1985, 1983, 1986, 1985, 1986, 1987, 1985, 1986, 1986, 1985 և 1986 թվականներին և ապրում են Հայաստանում՝ Երևանում, Վանաձորում, Բաղրամյան և Զոլաքար գյուղերում, Արթիկում, Մարտունիում և Հրազդանում:

Ա. Գործի նախապատմությունը

5. Դիմումատուները հանդիսանում են «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ, որոնք հաշվառված են եղել որպես զինապարտ:

6. 2004թ. հուլիսի 1-ին՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, դիմումատուները դիմել են իշխանություններին՝ խնդրելով զինվորական ծառայության փոխարեն անցնել այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Հայտնի է, որ նրանց խնդրանքները բավարարվել են, և դիմումատուները ուղարկվել են տարատեսակ հաստատություններ, ինչպիսիք են՝ հիվանդանոցները, բժշկական հաստատությունները և դիսպանսերները, իրենց ծառայությունը

անցնելու համար: Դիմումատուները բողոքել են, որ ծառայությունն անցնելու ընթացքում նրանք գիտակցել են, որ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը իրապես քաղաքացիական ծառայություն չէր:

7. 2005 թվականի մայիսին և հունիսին դիմումատուները նամակներ են ուղարկել այն հաստատությունների տնօրեններին, որտեղ նրանք ծառայում էին՝ պնդելով, որ քանզի այլընտրանքային ծառայությունը իրականում գտնվում էր զինված ուժերի հսկողության ներքո, նրանք չեն կարող շարունակել բարեխիղճ ծառայել: Նրանք պահանջել են, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը փոփոխվի այնպես, որ իրենք հնարավորություն ունենան անցնել իսկական այլընտրանքային քաղաքացիական ծառայություն: Այս նամակները ներկայացնելուց հետո դիմումատուները լքել են ծառայության վայրը:

Բ. Դիմումատուների դեմ հարուցված քրեական վարույթները

1. Առաջին, երկրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ, տասնվեցերորդ, տասնյոթերորդ և տասնիններորդ դիմումատուների դեմ հարուցված քրեական գործերը և նրանց կալանավորումը

(ա) Քրեական վարույթների հարուցումը

8. 2005 թվականի հունիսի 23-ին վեցերորդ, յոթերորդ, ութերորդ ու իններորդ դիմումատուների դեմ քրեական վարույթ է հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի (ՔՕ) 361-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա այն հիմնավորմամբ, որ նրանք խմբակային կերպով լքել էին այն քաղաքացիական հաստատությունը, որտեղ անցնում էին այլընտրանքային աշխատանքային ծառայությունը:

9. Նույն օրը ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա քրեական վարույթ է հարուցվել տասնյոթերորդ դիմումատուի դեմ այն հիմնավորմամբ, որ նա լքել էր այն քաղաքացիական հաստատությունը, որտեղ անցնում էր այլընտրանքային աշխատանքային ծառայությունը:

10. 2005 թվականի հունիսի 27-ին ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա քրեական վարույթ է հարուցվել առաջին, երկրորդ, հինգերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնվեցերորդ և տասնիններորդ դիմումատուների դեմ այն հիմնավորմամբ, որ նրանք լքել են այն քաղաքացիական հաստատությունը, որտեղ անցնում էին այլընտրանքային

աշխատանքային ծառայությունը: 2005 թվականի օգոստոսի 18-ին այս վարույթը բաժանվել է յուրաքանչյուր դիմումատուների դեմ հարուցված առանձին վարույթների:

(բ) Առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուները

11. 2005 թվականի օգոստոսի 22-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուներին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա:

12. Նույն օրը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը քննել է նրանց կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը, որը հիմնվում էր այն բանի վրա, որ նրանք կատարել են ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործություն և կարող են դիմել փախուստի: Ամրագրելով, որ մեղսագրվող արարքները միջին ծանրության հանցագործություններ են, և դրանց բնույթն ու վտանգավորությունը հաշվի առնելով՝ առաջին ատյանի դատարանը որոշել է բավարարել միջնորդությունը: Դիմումատուները ներկա էին համապատասխան նիստերին: Այս որոշումները ենթակա էին բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

13. 2005 թվականի օգոստոսի 31-ին քննիչը որոշում է կայացրել փոփոխել դիմումատուների դեմ բերված մեղադրանքները՝ առաջադրելով նոր մեղադրանք ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասի ներքո՝ այն հիմնավորմամբ, որ համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության վայրն ինքնակամ լքելու համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով:

14. 2005 թվականի սեպտեմբերի 6-ին և 8-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունները ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, և գործերը հանձնվեցին առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար:

15. 2005 թվականի նոյեմբերի 29-ին հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուները միջնորդություն են ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ բողոքելով, որ ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ նրանց դեպքերին, քանի որ նրանք զինծառայող չեն, և պահանջել են կարճել վարույթը:

16. 2006 թվականի մարտի 1-ին և 2-ին առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատախազի միջնորդության հիման վրա գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ պարզելու համար, ի թիվս այլոց, թե քրեական օրենքի որ դրույթներն են խախտվել մեղսագրվող արարքներով և արդյոք դիմումատուները կարող են դիտարկվել որպես զինվորական հանցագործության սուբյեկտ՝ ինչպես սահմանված է ՔՕ 356-րդ հոդվածի 5-րդ մասում՝ հաշվի առնելով, որ այն կիրառվում է միայն զինծառայողների հանդեպ: Առաջին ատյանի դատարանը որոշել է դիմումատուների կալանքը թողնել անփոփոխ:

6. 2006 թվականի մարտի 9-ին դիմումատուները միջնորդություններ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի անունով՝ ազատ արձակվելու պահանջով: Նրանք պնդել են, որ ամբողջովին համագործակցել են քննչական մարմնի հետ, կանչվելու դեպքում միշտ ներկայացել են, երբևէ չեն խոչընդոտել հետաքննությանը, չեն կատարել հանցագործություն և չեն փորձել դիմել փախուստի:

18. 2006 թվականի մարտի 13-ին և 16-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուները բողոք են բերել 2006 թվականի մարտի 1-ի և 2-ի որոշումների դեմ՝ պահանջելով կարճել վարույթը և ազատ արձակել իրենց: Նրանք պնդել են, որ ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ իրենց դեպքերին, քանի որ իրենք զինծառայող չեն: Իրենց կողմից կատարված գործողությունները քրեական հանցագործություններ չեն եղել, քանի որ գործի քննության ժամանակ ՔՕ-ն չի նախատեսել որևէ պատիժ այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը ինքնակամ լքելու համար: Բացի այդ, նրանց մեղադրանք է առաջադրվել և նրանք կալանավորվել են, ինչը խախտել է նրանց ազատության իրավունքը: Քրեական օրենքը պահանջում է, որպեսզի բոլոր հանցագործությունները ներառվեն ՔՕ-ի մեջ, այնպես որ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի վրա հիմնվելը անօրինական էր: Այնուհետև դիմումատուները բարձրացրել են միևնույն փաստարկները, ինչ 2006 թվականի մարտի 9-ի իրենց միջնորդություններում: Նրանք, ի թիվս այլոց, մեջ են բերել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ կետը:

19. 2006 թվականի ապրիլի 10-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը որոշել է մերժել առաջին դիմումատուի բողոքը և ուժի մեջ թողնել առաջին ատյանի որոշումը՝ առաջին դիմումատուի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քննչական մարմինը չի պարզաբանել թե արդյոք առաջին դիմումատուն կարող էր դիտարկվել որպես

զինվորական կանոնների դեմ հանցագործության սուբյեկտ: Այդուհանդերձ, կարիք կար դա անել հետագա քննության ընթացքում: Նմանատիպ որոշումներ են կայացվել հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների հանդեպ 2006 թվականի ապրիլի 11-ին և 13-ին:

20. Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել դիմումատուների բողոքները կալանքից ազատվելու մասով: Ինչ վերաբերվում է առաջին և տասներեքերորդ դիմումատուների կալանքին, վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ «ՔԴՕ») 35-րդ հոդվածով սահմանված՝ նրանց կալանավորումը պարտադիր դարձնող հիմքերը բացակայում են: Մասնավորապես, մինչև իրենց ծառայության վայրը լքելը առաջին և տասներեքերորդ դիմումատուները տեղեկացրել են դատախազին իրենց հասցեների մասին և չեն փորձել դիմել փախուստի քննության առաջին երեք ամիսների ընթացքում: Նրանք երբևէ չեն խոչընդոտել վարույթին, և չկար որևէ հիմք ենթադրելու, որ նրանք կկատարեն մեկ այլ հանցագործություն: Այսպիսի հանգամանքներում առաջին և տասներեքերորդ դիմումատուները վարույթի ընթացքում ցուցաբերել են պատշաճ վարքագիծ և այլևս նրանց կալանքի տակ պահելու անհրաժեշտություն չկար:

21. Ինչ վերաբերվում է հինգերորդ և տասնվեցերորդ դիմումատուների կալանքին, վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանը չի ներկայացրել որևէ պատճառաբանություն կալանքը անփոփոխ թողնելու համար, բացի այն փաստից, որ չկար որևէ հիմք հինգերորդ և տասնվեցերորդ դիմումատուներին կալանքի տակ պահելու համար:

22. 2006 թվականի ապրիլի 17-ին, 18-ին և 20-ին դիմումատուները վճռաբեկ բողոք են բերում այս որոշումների դեմ, որոնք մերժվում են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2006 թվականի մայիսի 26-ին և հունիսի 1-ին:

(գ) Երկրորդ, տասներկուերորդ և տասնիններորդ դիմումատուները

23. 2005 թվականի օգոստոսի 22-ին երկրորդ, տասներկուերորդ և տասնիններորդ դիմումատուների դեմ պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասով:

24. Նույն օրը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է նրանց կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը՝ միևնույն հիմնավորմամբ, ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և

տասնվեցերորդ դիմումատուների դեպքում (տե՛ս վերոնշյալ §12): Դիմումատուները ներկա էին համապատասխան դատական նիստերին: Որոշումները ենթակա էին բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

25. 2005 թվականի օգոստոսի 31-ին դիմումատուների դեմ առաջադրված մեղադրանքները փոխարինվեցին ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ հիմնվելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի վրա: Այդ հոդվածով մեղադրական եզրակացությունները հաստատվել են 2005 թվականի սեպտեմբերի 6-ին և 8-ին, և գործերը ուղարկվել են առաջին ատյանի դատարան ըստ էության քննության համար:

26. 2005 թվականի նոյեմբերի 21-ին դիմումատուները միասնական միջնորդություն են ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ պնդելով, որ ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ իրենց դեպքերին, քանի որ իրենք զինծառայողներ չէին, և պահանջելով կարճել վարույթը և ազատ արձակվել:

27. 2005 թվականի դեկտեմբերի 2-ին առաջին ատյանի դատարանը մեղավոր է ճանաչել դիմումատուներին ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասով և որպես պատիժ նշանակել է երկու տարի և վեց ամիս ժամկետով ազատազրկում:

28. 2005 թվականի դեկտեմբերի 14-ին նրանք բողոքներ են ներկայացրել իրենց դատապարտման դեմ, որտեղ պնդել են, որ իրենց կողմից կատարված արարքները քրեական օրենսդրությամբ դատապարտելի չէին և ճիշտ չեն որակավորվել, քանի որ իրենք զինծառայող չէին: Նրանք պահանջել են արդարացնել և կալանքի տակից ազատ արձակել իրենց:

29. 2006 թվականի փետրվարի 21-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը դատախազի միջնորդության հիման վրա վերացրել է տասներկուերորդ դիմումատուի դատապարտումը և լրացուցիչ նախաքննության է ուղարկել գործը նույն հիմքերով, ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների դեպքում (տե՛ս վերոնշյալ §19): Վերաքննիչ դատարանը թողել է տասներկուերորդ դիմումատուի կալանավորումը անփոփոխ:

30. 2006 թվականի փետրվարի 24-ին տասնիններորդ դիմումատուն միջնորդություն է ներկայացրել քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ պնդելով, որ իր կալանավորումը անհիմն է, և պահանջելով ազատ արձակել իրեն:

31. Նույն օրը վերաքննիչ դատարանը վերացրել է տասնիններորդ դիմումատուի դատապարտումը և լրացուցիչ նախաքննության է ուղարկել գործը նույն հիմքերով, ինչ տասներկուերորդ դիմումատուի դեպքում (տե՛ս վերոնշյալ §29): Վերաքննիչ դատարանը թողել է տասնիններորդ դիմումատուի կալանավորումը անփոփոխ: Նմանատիպ որոշում է կայացվել վերաքննիչ դատարանի կողմից 2006 թվականի փետրվարի 27-ին երկրորդ դիմումատուի գործով:

32. 2006 թվականի մարտի 3-ին և 6-ին երկրորդ, տասներկուերորդ և տասնիններորդ դիմումատուները միջնորդություններ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ բարձրացնելով միևնույն փաստարկները ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների գործերով ներկայացված միջնորդություններում (տե՛ս վերոնշյալ §17) և պահանջելով ազատ արձակվել:

33. 2006 թվականի մարտի 3-ին, 6-ին և 7-ին դիմումատուները վճռաբեկ բողոքներ են ներկայացրել 2006 թվականի փետրվարի 21-ի, 24-ի և 27-ի որոշումների դեմ՝ բարձրացնելով նմանատիպ փաստարկներ ինչ 2006 թվականի մարտի 13-ին և 16-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների կեղմից ներկայացված բողոքներում (տե՛ս վերոնշյալ §18):

34. Մարտի 13-ին տասներկուերորդ դիմումատուն ազատվել էր կալանքից՝ չհեռանալու մասին գրավոր կերպով պարտավորվելու դիմաց:

35. 2006 թվականի ապրիլի 14-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է տասնիններորդ դիմումատուի վճռաբեկ բողոքը: Այնուամենայնիվ, վճռաբեկ դատարանը կարգադրել է ազատ արձակել տասնիններորդ դիմումատուին՝ գտնելով, որ նրա կալանավորումը նախատեսող ՔԴՕ 135-րդ հոդվածում սահմանված հիմքերը բացակայում են: Մասնավորապես, նա ունեցել է բնակության մշտական վայր և հետաքննության առաջին երեք ամսվա ընթացքում փախուստի դիմելու որևէ փորձ չի կատարել: Նա երբևէ չի խոչընդոտել վարույթի իրականացմանը, և չի եղել որևէ հիմք ենթադրելու, որ նա կարող է կատարել մեկ այլ հանցագործություն: Գործի հանգամանքներից երևում էր, որ տասնիններորդ դիմումատուին կալանքի տակ պահելու չկար որևէ անհրաժեշտություն:

36. 2006 թվականի ապրիլի 21-ին երկրորդ դիմումատուն ազատվել էր կալանքից՝ չհեռանալու մասին գրավոր կերպով պարտավորվելու դիմաց:

37. 2006 թվականի հուլիսի 7-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է երկրորդ և տասներկուերորդ դիմումատուների վճռաբեկ բողոքները:

(դ) Վեցերորդ, յոթերորդ, ութերորդ և իններորդ դիմումատուները

38. 2005 թվականի օգոստոսի 17-ին յոթերորդ և իններորդ դիմումատուներին, իսկ 2005 թվականի օգոստոսի 18-ին վեցերորդ և ութերորդ դիմումատուներին ՔՕ 361-րդ հոդվածի 5-րդ մասով պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել:

39. 2005 թվականի օգոստոսի 17-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է յոթերորդ և իններորդ դիմումատուներին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը՝ միևնույն հիմնավորմամբ, ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների դեպքում (տե՛ս վերոնշյալ §12): Նմանատիպ որոշումներ են կայացվել վեցերորդ և ութերորդ դիմումատուների հանդեպ 2005 թվականի օգոստոսի 18-ին: Դիմումատուները ներկա էին համապատասխան դատական նիստերին: Այս որոշումները ենթակա էին բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

40. 2005 թվականի սեպտեմբերի 1-ին դիմումատուների դեմ առաջադրված մեղադրանքները փոխարինվեցին ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ հիմնվելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի վրա: Այդ հոդվածով միասնական մեղադրական եզրակացությունը հաստատվել է 2005 թվականի սեպտեմբերի 5-ին, և գործը ուղարկվել է առաջին ատյանի դատարան ըստ էության քննության համար:

41. 2005 թվականի հոկտեմբերի 20-ին դիմումատուները միջնորդություն են ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ պահանջելով կարճել վարույթը և ազատ արձակվել:

42. 2005 թվականի նոյեմբերի 3-ին առաջին ատյանի դատարանը դիմումատուներին մեղավոր է ճանաչել ՔՕ 361-րդ հոդվածի 5-րդ մասով և որպես պատիժ նշանակել է ազատազրկում երեք տարի ժամկետով:

43. Չպարզված օրը նրանք միասնական բողոք են ներկայացրել, որտեղ պնդել են, որ նրանց կողմից կատարված արարքները քրեական օրենսդրությամբ դատապարտելի չեն եղել և ճիշտ չեն որակավորվել, քանի որ նրանք զինծառայող չեն եղել: Նրանք պահանջել են արդարացնել և կալանքի տակից ազատ արձակել իրենց:

44. 2006 թվականի փետրվարի 27-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը վերացրել է նրանց դատապարտումը և լրացուցիչ նախաքննության է ուղարկել գործը նույն հիմքերով, ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների դեպքում

(տե՛ս վերոնշյալ §19): Բացի այդ, վերաքննիչ դատարանը նշել է, որ քրեական պատասխանատվության կարելի է ենթարկել միայն եթե կատարված արարքը պարունակում է հանցագործության բոլոր տարրերը: Քննչական մարմինը և առաջին ատյանի դատարանը չեն պարզաբանել թե արդյոք ներքո դիմումատուները կարող են դիտարկվել զինվորական կանոնների դեմ հանցագործության սուբյեկտ՝ ինչպես սահմանված է ՔՕ 361-րդ և 362-րդ հոդվածներում՝ հաշվի առնելով, որ, համաձայն ՔՕ 356-րդ հոդվածի, այդպիսի սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն զինծառայողները: Ինչ վերաբերվում է դիմումատուների կալանքին, վերաքննիչ դատարանը թողել է այն անփոփոխ, քանի որ նրանց կալանավորման հիմքերը չեն վերացվել:

45. 2006 թվականի մարտի 7-ին դիմումատուները միասնական վճռաբեկ բողոք են ներկայացրել՝ բարձրացնելով նմանատիպ փաստարկներ ինչ 2006 թվականի մարտի 13-ին և 16-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների կեղմից ներկայացված բողոքներում (տե՛ս վերոնշյալ §18):

46. 2006 թվականի մարտի 9-ին ազատ արձակվելու պահանջով դիմումատուները միասնական միջնորդություն են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ բարձրացնելով միևնույն փաստարկները ինչ 2006 թվականի մարտի 9-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների կեղմից ներկայացված միջնորդություններում (տե՛ս վերոնշյալ §17):

47. 2006 թվականի ապրիլի 20-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է վճռաբեկ բողոքը: Այնուամենայնիվ, վճռաբեկ դատարանը կարգադրել է ազատ արձակել դիմումատուներին միևնույն հիմնավորմամբ ինչ տասնիններորդ դիմումատուի դեպքում (տե՛ս վերոնշյալ §35):

(ե) Տասնչորսերորդ դիմումատուն

48. 2005 թվականի օգոստոսի 22-ին ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է հարուցվել տասնչորսերորդ դիմումատուի հանդեպ՝ իր կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայության կատարման վայր հանդիսացող քաղաքացիական հաստատությունը ինքնակամ լքելու առթիվ:

49. 2005 թվականի սեպտեմբերի 27-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով:

50. Նույն օրը Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է դիմումատուին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը՝ գտնելով, որ նա կարող է դիմել փախուստի,

խոչընդոտել վարույթին և խուսափել իր պատիժը կրելուց: Դիմումատուն ներկա էր այդ նիստին: Այս որոշումը ենթակա էր բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

51. 2005 թվականի սեպտեմբերի 28-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով, և գործը հանձնվել է առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար:

52. 2006 թվականի փետրվարի 2-ին դիմումատուն միասնական միջնորդություն է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ պնդելով, որ ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ իր հանդեպ, քանի որ ինքը զինծառայողներ չէ, և պահանջելով կարճել վարույթը և իրեն ազատ արձակել:

53. 2006 թվականի փետրվարի 27-ին առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատախազի միջնորդության հիման վրա գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ նույն հիմքերով, ինչ այլ դիմումատուների դեպքերում: Առաջին ատյանի դատարանը փոխարինել է դիմումատուի կալանավումը չհեռանալու մասին գրավոր պարտավորությամբ և կարգադրել է ազատ արձակել նրան՝ գտնելով, որ դատավարության ընթացքում իր վարքագիծը թույլ է տալիս եզրահանգել, որ նա չի դիմի փախուստի կամ կատարի մեկ այլ հանցագործություն:

54. 2006 թվականի մարտի 13-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ՝ պահանջելով կարճել իր հանդեպ հարուցված վարույթը, քանի որ նա զինծառայող չէր և իր կատարած արարքը քրեորեն պատժելի չէր:

55. 2006 թվականի մայիսի 3-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ կար հետագա քննության անցկացման անհրաժեշտություն:

56. 2006 թվականի մայիսի 8-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել, որը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2006 թվականի հունիսի 9-ին:

(գ) Տասնհինգերորդ դիմումատուն

57. 2005 թվականի հոկտեմբերի 14-ին ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է հարուցվել տասնհինգերորդ դիմումատուի հանդեպ՝ իր կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայության կատարման վայր հանդիսացող քաղաքացիական հաստատությունը ինքնակամ լքելու առթիվ:

58. 2005 թվականի հոկտեմբերի 19-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով:

59. Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք - Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է դիմումատուին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը՝ գտնելով, որ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ նա կարող է դիմել փախուստի, խոչընդոտել վարույթի իրականացմանը և կատարել մեկ այլ հանցագործություն: Դիմումատուն ներկա էր այդ նիստին: Այս որոշումը ենթակա էր բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

60. 2005 թվականի նոյեմբերի 4-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով, և գործը հանձնվել է առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար:

61. 2006 թվականի մարտի 3-ին առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատախազի միջնորդության հիման վրա գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ նույն հիմքերով, ինչ այլ դիմումատուների դեպքերում: Առաջին ատյանի դատարանը թողել է դիմումատուի կալանավորումը անփոփոխ:

62. 2006 թվականի մարտի 9-ին ազատ արձակվելու պահանջով դիմումատուն միջնորդություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ բարձրացնելով միևնույն փաստարկները ինչ այլ դիմումատուների կողմից ներկայացված միջնորդություններում, և պահանջելով ազատ արձակել իրեն:

63. 2006 թվականի մարտի 17-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել 2006 թվականի մարտի 3-ի որոշման դեմ՝ պահանջելով կարճել իր հանդեպ հարուցված վարույթը և ազատ արձակել իրեն: Նա բարձրացրել է միևնույն փաստարկները, ինչ առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների գործերով 2006 թվականի մարտի 13-ին և 16-ին ներկայացված բողոքներում (տե՛ս վ վերոնշյալ §18):

64. Նույն օրը դիմումատուն ազատ է արձակվել կալանքից, որին փոխարինել չհեռանալու մասին գրավոր պարտավորության ստանձնումը:

65. 2006 թվականի ապրիլի 19-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ անհրաժեշտ է իրականացնել հետազա քննության:

66. 2006 թվականի ապրիլի 28-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին:

(է) Տասնյոթերորդ դիմումատուն

67. 2005 թվականի օգոստոսի 24-ի երեկոյան ժամը 6-ին տասնյոթերորդ դիմումատուն ձերբակալվել է իր դեմ հարուցված քրեական վարույթի առթիվ:

68. 2005 թվականի օգոստոսի 26-ին նրան պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 362-րդ հոդվածի 1-րդ մասով:

69. Նույն օրը երեկոյան ժամը 4-ին նրան ներկայացրել են Երևանի Կենտրոն և Նորք - Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.-ին, ով նրան լսելուց հետո որոշել է բավարարել նրան կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը՝ գտնելով, որ մնալով ազատության մեջ նա կարող է խոչընդոտել վարույթին և դիմել փախուստի: Այս որոշումը ենթակա էր բողոքարկման քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան տասնհինգօրյա ժամկետում:

70. 2005 թվականի սեպտեմբերի 2-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով, և գործը հանձնվել է առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար:

71. 2005 թվականի սեպտեմբերի 15-ին առաջին ատյանի դատարանը մեղավոր է ճանաչել դիմումատուին ՔՕ 362-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է նրան ազատազրկման երկու տարի և վեց ամիս ժամկետով:

72. Չպարզված օրը դիմումատուն բողոք է ներկայացնում:

73. 2006 թվականի փետրվարի 8-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ պնդելով, որ իր կալանավորումը անհիմն է, և պահանջելով ազատ արձակել իրեն:

74. 2006 թվականի մարտի 16-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը վերացրել է դիմումատուի դատապարտումը և դատախազի միջնորդության հիման վրա լրացուցիչ նախաքննության է ուղարկել գործը նույն հիմքերով, ինչ այլ դիմումատուների դեպքում: Վերաքննիչ դատարանը թողել է դիմումատուի կալանավորումը անփոփոխ:

75. 2006 թվականի մարտի 23-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պահանջելով կարճել վարույթը և ազատ արձակել նրան: Նա բարձրացրել է միևնույն փաստարկները, ինչ 2006 թվականի մարտի 13-ին և 16-ին առաջին, հինգերորդ, տասներեքերորդ և տասնվեցերորդ դիմումատուների կողմից ներկայացված բողոքներում (տե՛ս վերոնշյալ §18):

76. 2006 թվականի մարտի 24-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ բարձրացնելով միևնույն փաստարկները, ինչ այլ դիմումատուների կողմից ներկայացված միջնորդություններում, և պահանջելով ազատ արձակել իրեն:

77. 2006 թվականի ապրիլի 20-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի վճռաբեկ բողոքը՝ գտնելով, որ վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված էր: Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը կարգադրել է ազատ արձակել դիմումատուին միևնույն հիմնավորմամբ, ինչ տասնիններորդ դիմումատուի դեպքում (տե՛ս վերը նշված §35):

3. Վարույթը երրորդ, չորրորդ և տասնութերորդ դիմումատուների դեմ

78. 2005 թվականի օգոստոսի 9-ին երրորդ և տասնութերորդ դիմումատուների դեմ ՔՕ 361-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո առանձին քրեական գործեր են հարուցվել՝ նրանց կողմից այն քաղաքացիական հաստատություններն ինքնական թողնելու համար, որտեղ անցնում էին իրենց այլընտրանքային աշխատանքային ծառայությունը

79. Նույն օրը երրորդ և տասնութերորդ դիմումատուները չհեռանալու մասին գրավոր կերպով պարտավորություն են ստանձնել:

80. 2005 թվականի օգոստոսի 15-ին նրանք պաշտոնապես մեղադրվել են 361-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո:

81. 2005 թվականի օգոստոսի 16-ին նմանատիպ քրեական գործ է հարուցվել չորրորդ դիմումատուի դեմ:

82. 2005 թվականի սեպտեմբերի 12-ին նա պաշտոնապես մեղադրվել է 361-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո և չհեռանալու մասին գրավոր կերպով պարտավորություն է ստանձնել

83. 2005 թվականի հոկտեմբերի 28-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը երրորդ և տասնութերորդ դիմումատուներին մեղավոր է ճանաչել ՔՕ հոդված 361-ի 4-րդ մասի ներքո և դատապարտել նրանց 2 տարի ժամկետով ազատազրկման: Նրանք կալանավորվել են:

84. 2005 թվականի նոյեմբերի 8-ին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը չորրորդ դիմումատուին մեղավոր է ճանաչել և ՔՕ հոդված 361-ի 4-րդ մասի ներքո և դատապարտել նրան 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման: Նա կալանավորվել է:

85. 2005 թվականի նոյեմբերի 10-ին երրորդ դիմումատուն բողոք է ներկայացրել՝ պահանջելով արդարացնել իրեն և ազատել կալանքից, քանի որ ինքը զինծառայող չէ և իր կողմից կատարված արարքը քրեորեն

պատժելի չէ: Չպարզված օրը չորրորդ և տասնութերորդ դիմումատուները ևս բողոքներ են ներկայացրել:

86. 2006 թվականի փետրվարի 8-ին երրորդ և չորրորդ դիմումատուները միջնորդություններ են ներկայացրել քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ վիճարկելով, որ իրենց կողմից կատարված արարքները հանցագործություններ չեն եղել գործի քննության ընթացքում և պահանջելով ավարտել դատավարությունն ու ազատ արձակել իրենց:

87. 2006 թվականի փետրվարի 9-ին տասնութերորդ դիմումատուն միջնորդություն է ներկայացրել վերաքննիչ դատարան՝ վիճարկելով, որ իր շարունակվող կալանավորումն անարդարացի է և պահանջելով ազատ արձակել իրեն:

88. 2006 թվականի փետրվարի 28-ին երրորդ և չորրորդ դիմումատուները նմանատիպ միջնորդություններ են ներկայացրել:

89. Նույն օրը վերաքննիչ դատարանը բեկանել է երրորդ և չորրորդ դիմումատուների վերաբերյալ կայացված դատական ակտերը և դատախազի միջնորդության հիման վրա դատական գործերը վերադարձրել է լրացուցիչ քննության՝ մյուս դիմումատուների գործերում առկա միևնույն պատճառներով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նրանց կալանավորումը պետք է անփոփոխ մնա:

90. 2006 թվականի մարտի 6-ին տասնութերորդ դիմումատուն ևս երկու միջնորդություն է ներկայացրել վերաքննիչ դատարան՝ վիճարկելով, որ իր կողմից կատարված արարքն իրենից հանցագործություն չի ներկայացրել գործի քննության ընթացքում և պահանջելով, որ գործի վարույթը կարճվի, իսկ ինքն ազատ արձակվի:

91. Նույն օրը վերաքննիչ դատարանը բեկանել է տասնութերորդ դիմումատուի վերաբերյալ կայացված դատական ակտը և այս գործը ևս վերադարձրել է լրացուցիչ քննության: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նրա կալանավորումը պետք է անփոփոխ մնա:

92. 2006 թվականի մարտի 8-ին երրորդ և չորրորդ դիմումատուները, օրենքով նախատեսված կարգով, բողոքներ են ներկայացրել վերաքննիչ դատարանի կողմից 2006 թվականի փետրվարի 28-ին կայացված որոշումների դեմ (տե՛ս՝ § 89)՝ պահանջելով, որ գործի վարույթը կարճվի ու իրենք ազատ արձակվեն:

93. 2006 թվականի մարտի 9-ին երրորդ և չորրորդ դիմումատուները միջնորդություններ են ներկայացրել գլխավոր դատախազին՝ պահանջելով իրենց ազատ արձակել:

94. 2006 թվականի մարտի 14-ին և 15-ին նմանատիպ բողոք և միջնորդություն ներկայացվել է տասնութերորդ դիմումատուի կոմից:

95. 2006 թվականի ապրիլի 7-ին վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուների բողոքները՝ գտնելով, որ վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված է: Վճռաբեկ դատարանը կարգադրել է, այնուամենայնիվ, որ նրանք ազատ արձակվեն տասնիններորդ դիմումատուի գործում առկա նույն հիմքերով (տե՛ս § 35):

4. Վարույթն ընդդեմ տասներորդ և տասնմեկերորդ դիմումատուների

96. 2005 թվականի օգոստոսի 17-ին տասներորդ և տասնմեկերորդ դիմումատուների դեմ ՔՕ հոդված 361-ի 4-րդ մասի ներքո առանձին քրեական գործեր են հարուցվել՝ նրանց կողմից այն քաղաքացիական հաստատություններն ինքնակամ թողնելու համար, որտեղ անցնում էին իրենց այլընտրանքային աշխատանքային ծառայությունը:

97. 2005 թվականի հոկտեմբերի 14-ին նրանք ձևականորեն մեղադրվել են 361-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո և չհեռանալու մասին գրավոր կերպով պարտավորություն է ստանձնել:

98. 2006 թվականի մարտի 3-ին և 7-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը, դատախազի միջնորդության հիման վրա, որոշում է դիմումատուների գործերը վերադարձնել լրացուցիչ քննության՝ մյուս դիմումատուների գործերում առկա միևնույն պատճառներով:

99. Տվյալ որոշումների դեմ դիմումատուների բողոքները մերժվել են քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից համապատասխանաբար 2006 թվականի ապրիլի 13-ին և 14-ին և 2006 թվականի մայիսի 26-ին և հունիսի 1-ին:

5. Դիմումատուների դեմ քրեական գործով վարույթի կարճումը

100. 2006 թվականի հունիսի 22-ին Գեղարքունիքի մարզի դատախազը որոշում է կայացնում կարճել առաջին դիմումատուի դեմ քրեական գործի վարույթն այն հիմքով, որ քննարկվող հանցագործությունը միջին ծանրության է, նա մոտ 8 ամիս գտնվել է կալանքի տակ և որ քննարկվող արարքը կորցրել է իր հանրային վտանգավորությունը:

101. 2006 թվականի սեպտեմբերի 12-ին գլխավոր դատախազը որոշում է կայացնում վերացնել նշված որոշումը և գործի վարույթը կարճել հանցակազմի բացակայության հիմքով՝ հղում անելով ՔԴՕ հոդված 35-ի 1-

ին մասի 2-րդ կետին: Գլխավոր դատախազը գտել է, մասնավորապես, որ գործի քննության ընթացքում ՔՕ-ն այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրն ինքնակամ թողնելը որպես հանցագործություն չէր նախատեսում և որ այդպիսի հանցագործությունն ընդգրկվել է ՔՕ-ում միայն 2006 թվականի հունիսի 1-ին տեղի ունեցած փոփոխություններից հետո (տե՛ս նաև § 112-113): Գլխավոր դատախազը հայցել է առաջին դիմումատուի ներողամտությունը և տեղեկացրել, որ նրա իրավունքն է ՔԴՕ հոդված 66-ին համապատասխան հատուցում պահանջել:

102. Նույն ժամանակահատվածում բոլոր դիմումատուների վերաբերյալ նույնական որոշումներ են կայացվել:

Դ. Փոխհատուցման պահանջները

103. 2006 թվականի դեկտեմբերի և 2007 թվականի հունվար, փետրվար, մարտ և մայիս ամիսների տարբեր օրերի դիմումատուները քաղաքացիական վարույթ են սկսել ֆինանսների և էկոնոմիակայի նախարարության դեմ՝ պահանջելով նյութական և ոչ նյութական վնասների հատուցում իրենց դեմ քրեական դատավարության համար՝ ներառյալ իրենց կալանավորումը: Նյութական վնասի փոխհատուցման պահանջը ներառում էր նրանց ենթադրյալ փոխադրման և բժշկական ծախսերը, սննդի ծանրոցների հետ կապված ծախսերը և բաց թողնված օգուտը:

104. 2007 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հուլիս ամիսների տարբեր օրերի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հետազոտել է և մերժել բոլոր դիմումատուների հայցերը՝ գտնելով, որ նյութական փոխհատուցման պահանջներն անհիմն են: Ինչ վերաբերում է ոչ նյութական հատուցմանը, ապա այս հայցերը մերժվել են, քանի որ ՀՀ օրենսդրությունը փոխհատուցման նման տեսակ չի նախատեսում:

105. 2007 թվականի մարտ, ապրիլ, մայիս, հունիս և հուլիս ամիսների տարբեր օրերի դիմումատուները բողոք են ներկայացրել:

106. 2007 թվականի հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների տարբեր օրերի վերաքննիչ քաղաքացիական դատարան որոշում է մերժել բողոքները և ուժի մեջ թողնել առաջին ատյանի դատարանի վճիռները:

107. 2007 թվականի դեկտեմբերի և 2008 թվականի հունվար և փետրվար ամիսների տարբեր օրերի դիմումատուները, օրենքով սահմանված կարգով, բողոքներ են ներկայացրել, որոնք վճռաբեկ

դատարանի կողմից անընդունելի են ճանաչվել 2008 թվականի հունվարի 21-ին և փետրվարի 11-ին՝ անհիմն լինելու պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1-ից)

108. Համապատասխան ընդհանուր և այլ դրույթները սահմանում են.

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը

«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: ...»

Հոդված 3. Քրեական պատասխանատվության հիմքը

«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:»

Հոդված 5. Օրինականության սկզբունքը

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է:»

Հոդված 327. Ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը

«1. Ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու օրինական հիմքերի բացակայության

դեպքում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»

109. ՔՕ՝ տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով գլուխ 35-ի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 356. Հրամանը չկատարելը

«5. Սույն գլխում նախատեսված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները:»

Հոդված 361. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը

«1.Զորակոչի կամ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայություն անցնող զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը... մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկից երեք օր տևողությամբ՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

...

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, եթե ինքնակամ բացակայությունը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են մի խումբ

անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»

Հոդված 362 Դասալքությունը

«1. Դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով: ...»

Բ. Քրեական օրենսգրքում տեղ գտած փոփոխություններ (օրենքներ ՀՕ-34-Ն և ՀՕ-34-Ն)

110. 2005 թվականի մայիսի 19-ին ՀՀ կառավարությունն Ազգային ժողովին է ներկայացրել օրենքի նախագիծ՝ առաջարկելով ՔՕ հոդված 327-ում, որը զինվորական ծառայությունից խուսափելու համար տուգանք էր նախատեսում, փոփոխություն կատարել՝ «զինվորական» բառից հետո լրացնելով «կամ այլընտրանքային» բառերով: Օրենքի նախագծի վերաբերյալ պարզաբանման մեջ նշվում էր, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը խախտում էր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը, քանի որ այլընտրանքային ծառայությունից խուսափող անձինք անպատիժ էին մնում՝ ի տարբերություն ժամկետային զինվորական ծառայությունից խուսափող անձանց:

111. Այս օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2005 թվականի դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի փետրվարի 4-ին (օրենք ՀՕ-34-Ն):

112. 2006 թվականի մարտի 30-ին ՀՀ կառավարությունն ազգային ժողովին մեկ այլ օրենքի նախագիծ է ներկայացնում՝ առաջարկելով ՔՕ հոդված 327-ում մեկ այլ փոփոխություն կատարել՝ նոր դրույթ նախատեսելով, այն է՝ հոդված 327.1, որը պատժելի էր դարձնելու այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելը: Օրենքի նախագծի վերաբերյալ պարզաբանման մեջ նշում էր, որ դատարաններում ընթացքի մեջ է գտնվում ավելի քան 29 քրեական գործ, որոնցում մեղադրանքն առաջադրված է ՔՕ հոդված 361-ի ներքո: ՔՕ-ն ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքից առաջ, և, բնականաբար, այն չէր կարող տուգանք նախատեսել

այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

113. Այս օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հունիսի 1-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ին (օրենք ՀՕ-59-Ն):

Գ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)

114. ՔԴՕ՝ գործի քննության ընթացքում ուժի մեջ գտնվող համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 35. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ

« 1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ ... 2) արարքի մեջ հանցակազմ չկա. ...»

Հոդված 66. Արդարացվածը

« 1. Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի... [ի թիվս այլոց, 35 հոդվածի առաջին մասի 2-րդ կետով] ... կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ:

...

3. Արդարացվածն իրավունք ունի նաև պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները: ...»

Հոդված 135. Խափանման միջոց կիրառելու հիմքերը

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում,

երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.
- 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.
- 3) կատարել քրեական օրենքով արգելված արարք.
- 4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.
- 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:»

Դ. Քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1-ից)

115. Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 17. Վնասների հատուցում

«1.Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): ...»

Հոդված 1064. Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չքացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: ...»

Ե. ՀՀ օրենքը այլընտրանքային ծառայության մասին (ուժի մեջ է 2004 թվականի հուլիսի 1-ից)

116. Օրենքի համապատասխան դրույթները՝ 2004 թվականի նոյեմբերի 22-ին ընդունված և 2005 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած փոփոխություններով հանդերձ, սահմանում են.

Հոդված 2. Այլընտրանքային ծառայության հասկացությունը և տեսակները

«1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն.

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

3. Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման

ապահովումն է և չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ:»

Հոդված 3. Այլընտրանքային ծառայության անցնելու հիմքը

«1. Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը: »

Հոդված 21. Այլընտրանքային ծառայողների պատասխանատվությունը

«2. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների և հանցագործությունների, ինչպես նաև պետությանը հասցրած գույքային վնասի համար պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության վայրն ինքնակամ լքելու համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով: [նշում՝ այս պարբերությունն ուժը կորցրել է 01.06.06]

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

117. Դատարանը նշում է, որ դիմումատուները միասին մի շարք գանգատներ են բարձրացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի տարբեր դրույթների շրջանակներում: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ տասներորդ և տասնմեկերորդ դիմումատուները երբեք ազատությունից զրկված չեն եղել իրենց դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում (տե՛ս վերոնշյալ §§ 96-99). Նման պարագայում նրանք չեն կարող պահանջել, որ իրենց զոհ համարեն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ենթադրյալ խախտման իմաստով և այդ հոդվածի շրջանակներում նրանց

համապատասխան գանգատները չեն համապատասխանում *ratione personae* սկզբունքին և պետք է հայտարարվեն անընդունելի:

118. Այդ իսկ պատճառով, Դատարանը այս երկու դիմումատուների գանգատները, կապված Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հետ, նույն խորությամբ չի ուսումնասիրի, ինչպես որ մնացած տասնյոթ դիմումատուների գանգատները: Այսպիսով Դատարանի կողմից մատնանշված “դիմումատուները” չեն ներառի տասներորդ և տասնմեկերորդ դիմումատուներին:

119. Դատարանը հնարավոր է համարում քննել բոլոր տասնյոթ դիմումատուների գանգատները միասին, քանի որ դրանց փաստական հանգամանքները և իրենց գանգատների բնույթը նույնն է:

II. ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Երրորդ, չորրորդ և տասնութերորդ դիմումատուների վերաբերյալ Կառավարության կողմից ներկայացրած առարկությունը

120. Կառավարությունը պնդել է, որ երրորդ, չորրորդ և տասնութերորդ դիմումատուների նկատմամբ կալանք չի կիրառվել: Նրանց նկատմամբ կիրառված միակ խափանման միջոցը եղել է ստորագրություն չհեռանալու մասին:

121. Դատարանը նշում է, որ իրականում երրորդ, չորրորդ և տասնութերորդ դիմումատուները մինչև իրենց առաջադրված մեղադրանքը չեն կալանավորվել: Ինչևէ, այն բանից հետո, երբ Վերաքննիչ դատարանը 2006 թվականի փետրվարի 28-ին և մարտի 6-ին նրանց ազատազրկումը փոփոխվեց նրանք դեռ գտնվում էին նախնական կալանքի տակ (տե՛ս, *Solmaz v. Turkey*, թիվ 27561/02, § 34, 2007 թվականի հունվարի 16) մինչև 2006 թվականի ապրիլի 7-ին նրանց ազատելը (տե՛ս, վերոնշյալ §§ 87, 89 և 93): Այսպիսով նրանք կարող են պահանջել, որ իրենց զոհ ճանաչեն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի և 3-րդ կետի շրջանակներում՝ կապված քննարկվող ժամանակահատվածի հետ:

122. Հետևաբար Կառավարության առարկությունը ենթակա է մերժման:

B. Կառավարության առարկությունը՝ կապված իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հետ

123. Կառավարությունը նշել է, որ դիմումատուները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նրանք առաջին ատյանի դատարանի կալանքի վերաբերյալ որոշման դեմ բողոք չեն ներկայացրել: Ավելին, նրանք ոչ մի փաստարկ կամ առարկություն չեն ներկայացրել այն ժամանակ, երբ իրենց տեղափոխման հարցը քննարկվում էր կալանքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ:

124. Դիմումատուները նշել են, որ իրենք մի շարք բողոքներ և միջնորդություններ են ներկայացրել, որպեսզի դադարեցվի քրեական վարույթը և որպեսզի իրենց ազատ արձակեն: Յուրաքանչյուր ներկայացրած բողոք ապարդյուն կլիներ, քանի որ այն անպայման կմերժվեր, ինչպես որ պարբերաբար մերժվել էին բազմաթիվ միջնորդություններ և իրենց ազատելու վերաբերյալ բողոքները, մինչև այն պահը, երբ ՀՀ դատախազությանը հայտնի դարձավ, որ մեղադրանքներից բացակակայում է հանցակազմը: Այսպիսով, ՀՀ դատարանները քննարկվող ժամանակահատվածում հակված չեն եղել նորոգել այն դատախազների կատարած գործողությունները, ովքեր քննություն են անցկացրել հանցակազմի բացակայությամբ: Կարևոր չէ, թե քանի վերաքննիչ բողոք են նրանք ներկայացրել, ներպետական դատարանները պատրաստ չեն եղել որոշում կայացնել ՀՀ դատախազության կատարած գործողությունների վերաբերյալ:

125. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը պարտավորեցնում է միջազգային դատական մարմնի առջև Պետության դեմ վարույթ հարուցել ցանկացող անձանց սկզբում օգտագործել ազգային իրավական համակարգում առկա միջոցները՝ այդպիսով ազատելով պետություններին միջազգային մարմնի առջև պատասխան տալու պարտականությունից՝ մինչև նրանք հնարավորություն կունենան հարցը քննարկել իրենց սեփական իրավական համակարգերում: Կանոնին համապատասխանելու համար դիմումատուն պետք է օգտվի այնպիսի միջոցներից, որոնք առկա և բավարար են ենթադրյալ խախտումները վերականգնելու համար (տե՛ս, ի թիվս այլոց, *Assenov and Others v. Bulgaria*, թիվ 24760/94, § 85, ECHR 1999-VIII):

126. Ավելին, ըստ 35-րդ հոդվածի՝ առկա և բավարար իրավական պաշտպանության միջոցները պետք է բավարար կերպով ակնհայտ լինեն ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականորեն, որոնց բացակայության դեպքում, չի ապահովվի մատչելիության և արդյունավետության սկզբունքները (տե՛ս, ի թիվս այլոց, *De Jong, Baljet u Van den Brink v. the Netherlands*, 1984 թվականի մայիսի 22, § 39, Շարք Ա թիվ 77, և *Vernillo v. France*, 1991 թվականի փետրվարի 20, § 27, Շարք Ա թիվ 198). Կառավարությունը, երբ պնդում է, որ չի սպառվել իրավական պաշտպանության միջոցները, պետք է Դատարանին բավարար ապացույցներ ներկայացնի առ այն, որ գոյություն է ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը հասանելի է եղել և տեսականորեն, և գործնականորեն տվյալ ժամանակահատվածում: Այսինքն, եղել է մի մատչելի միջոց, որով հնարավոր էր ապահովել խախտված իրավունքների վերականգնում՝ կապված դիմումատուի գանգատների հետ, և որը այնպիսին է եղել, որ ապահովի հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ (տե՛ս, *Akdivar u Others v. Turkey*, 1996 թվականի սեպտեմբերի 16, § 68, Վճիռների և Որոշումների զեկույցներ 1996-IV):

127. Այն ժամանակ, երբ բավարարվի այս ապացուցման պարտավորությունը, դիմումատուն ինքը պետք է ապացուցի, որ Կառավարության կողմից առաջարկված իրավական պաշտպանության միջոցը, փաստորեն, սպառվել է կամ այլ կերպ անբավարար է եղել և անարդյունավետ՝ կախված գործի մասնավոր հանգամանքներից կամ, որ գոյություն է ունեցել յուրօրինակ իրավիճակ, որը կարդարացներ դիմումատուին այդ միջոցները չսպառելու համար (տե՛ս, *Kalashnikov v. Russia* (որոշում), թիվ 47095/99, 2001 թվականի սեպտեմբերի 18, և *Melnik v. Ukraine*, թիվ 72286/01, § 67, 2006 թվականի մարտի 28):

128. Դատարանը այնուհետև նշում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը պետք է ճկուն կիրառելիություն ունենա և զերծ լինի ուռճացված ձևականությունից (տե՛ս, *Sejdovic v. Italy* [ՄԴ], թիվ 56581/00, § 44, ՄԻԵԿ 2006-II). Ավելին, ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառելու կանոնը ոչ բացարձակ է, ոչ էլ՝ ավտոմատ կերպով կիրառելի: Այս կանոնը կիրառված լինելու հարցը քննարկելիս՝ կարևոր է ի նկատի ունենալ քննարկվող Պետության իրավական համակարգում գոյություն ունեցող պաշտոնական իրավական պաշտպանության միջոցները ընդհանրապես իրավական և քաղաքական համատեքստում, ինչպես որ դրանք գործում են, ինչպես նաև պետք է հաշվի առնել գործի մասնավոր հանգամանքները և այն հարցը, թե արդյոք դիմումատուն բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել է, որը ողջամտորեն պետք է ձեռնարկեր, որպեսզի սպառեր

առկա ներպետական իրավական պաշտպանության միջոցները (տե՛ս, *Salman v. Turkey* [ՄԴ], թիվ 21986/93, § 86, ՄԻԵԴ 2000-VII, և վերոնշյալ *Melnik*, § 67):

129. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ ակնհայտ է դառնում, որ դիմումատուները առաջին ատյանի դատարանի կալանքի վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոք չեն ներկայացրել կամ որևէ փաստարկ չեն ներկայացրել կալանքի վերաբերյալ դատաքննությունների ժամանակ առ այն, որ այն գործողությունները, որոնց համար իրենք մեղադրվել են ներպետական իրավունքի համաձայն հանցանք չեն համարվել և այդ իսկ պատճառով իրենց կալանքը հիմնված չի եղել իրենց կողմից հանցանք կատարելու հիմնավոր կասկածի վրա: Ինչևէ, գրեթե բոլոր դիմումատուները ըստ էության ավելի ուշ առաջին ատյանի դատարաններում կամ Վերաքննիչ դատարանում առանձին միջնորդության տեսքով այս կամ այն կերպ բարձրացրել են այս հարցը (տե՛ս, վերոնշյալ §§ 15, 26, 41, 52, 86 և 90) կամ այն որոշումների դեմ իրենց վերաքննիչ բողոքներում, որոնց համաձայն իրենց գործերը ուղարկվել են հետազա քննության (տե՛ս, վերոնշյալ §§18, 33, 45, 54, 63 և 75) կամ իրենց դեմ առաջադրված մեղադրանքների դեմ ներկայացրած վերաքննիչ բողոքներում (տե՛ս, վերոնշյալ §§ 28, 43 և 85): Բոլոր այս դեպքերում և առաջին ատյանի, և Վերաքննիչ դատարանները կամ չեն անդրադարձել այս հարցին, կամ մեծամասամբ ոչ հստակ մոտեցում են ցուցաբերել և խուսափել են որևէ վերջնական եզրահանգում տալ՝ ավելացնելով, որ այս հարցը պետք է պարզաբանվեր հետազա քննությունների ընթացքում, և մերժել են ազատ արձակել դիմումատուներին (տե՛ս, վերոնշյալ §§ 29, 31, 44, 74, 89 և 91): Անգամ այն քիչ դեպքերում, երբ դիմումատուները ազատ են արձակվել, այս հարցը կարգավորվել է դիմումատուների կողմից հանցանք կատարելու հիմնավոր կասկածի հետ առնչություն չունեցող հիմքով, մասնավորապես այն հիմքով, որ դիմումատուները չեն խուսափել քրեական վարույթն իրականացնող մարմնից, չեն խոչընդոտել գործի քննությանը և այլ հանցանք չեն կատարել (տե՛ս, վերոնշյալ §§ 20, 21, 35 և 53):

130. Հիմնվելով վերոնշյալի վրա՝ Դատարանը լրջորեն կասկածում է, որ հազիվ լինեին հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ, եթե դիմումատուները այս հարցերը բարձրացնեին իրենց նախկին վերաքննիչ բողոքներում կամ կալանքի վերաբերյալ առաջին ատյանի դատարաններում դատաքննության ընթացքում: Ավելին, դատելով այն մոտեցումից, որով ներպետական դատարանները եզրահանգել են դիմումատուների առաջադրված մեղադրանքների ողջամիտ կասկածի բացակայության փաստին, պարզվում է, որ տվյալ ժամանակահատվածի դատական

պրակտիկան պարտավոր չէր որևէ ողջամիտ ձևով անդրադառնալ այս հարցին, մինչև որ ներկայացվել են օրենսդրական փոփոխություններ և դատախազությունը հրաժարվել է մեղադրանքից: Դատարանը, այսպիսով եզրակացնում է, որ Կառավարության կողմից նշված իրավական պաշտպանության միջոցները արդյունավետ չեն եղել կամ հնարավորություն չեն տվել դիմումատուների քննարկվող գանգատների մասով ապահովել իրավունքի վերականգնում և չեն ապահովել հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ այս գործի շրջանակներում: Այդ իսկ պատճառով Կառավարության՝ իրավական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ առարկությունը մերժվում է:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ «գ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

131. Դիմումատուները պնդել են, որ իրենք կալանավորվել են մի արարքի համար, որը քննարկվող ժամանակահատվածում հանցանք չի համարվել: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետը, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

...

(գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,»:

Ա. Ընդունելիությունը

132. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ:

Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

133. Դիմումատուները նշել են, որ իրենց կալանքը հիմնված չի եղել իրենց կողմից կատարած հանցանքի վերաբերյալ հիմնավոր կասկածի վրա: Այդ ժամանակ գործող օրենքը չի սահմանել այլընտրանքային ծառայության վայրը առանց թույլտվության լքելու հանցանք, որը նաև հաստատել է Գլխավոր դատախազը, որն ընդունել է, որ իրենց գործողություններում բացակայել է հանցակամը: Հետևաբար, դիմումատուների կալանքը իրականացվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտմամբ:

134. Կառավարությունը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը պահանջում է ներպետական իրավունքի հետ համապատասխանեցում: Դիմումատուները իրենց այլընտրանքային ծառայության վայրը ինքնակամ լքելու հետևանքով խախտել են օրենքը: Քանի որ նրանք պարտավոր են եղել Սահմանադրության դրույթները պահպանել, քննություն իրականացնող մարմինները, հիմնվելով հիմնավոր կասկածի վրա, առ այն, որ նրանք օրենքով արգելված արարքներ են կատարել, կալանքի վերաբերյալ միջնորդություններ են ներկայացրել: Ավելին, քննություն իրականացնող մարմինները կիրառել են Այլընտրանքային ծառայության մասին օրենքի 21-րդ մասի 2-րդ պարբերությունը, որը գործում էր տվյալ ժամանակահատվածում: Հետևաբար քննություն իրականացնող մարմինը և առաջին ատյանի դատարանները օրինական որոշումներ են կայացրել և կալանավորել են դիմումատուներին օրենքով արգելված արարք կատարելու համար: Հետևաբար, դիմումատուների կալանքը օրինական է եղել: Դիմումատուներին իրենց գործողությունների համար մեղադրանք է առաջադրվել համաձայն ՔՕ-ի 361-րդ և 362-րդ հոդվածների: Դիմումատուների գործերով ըստ էության քննությունից և լրացուցիչ քննությունից հետո ներպետական մարմինները գտել են, որ դիմումատուների կողմից կատարած արարքներում բացակայել է հանցակազմը, իսկ դատախազը դադարեցրել է վարույթը և ազատ է արձակել դիմումատուներին: Համաձայն Դատարանի նախադեպի՝ կալանքը իրականում օրինական է եղել, եթե հիմնվենք դատարանի հրամանի վրա: Դատական սխալը, համաձայն ներպետական իրավունքի այն դեպքում, երբ

կար դատարանի հրաման, քննարկվող ժամանակահատվածի կալանքի օրինականության վրա հետադարձ ուժ չէր կարող ունենալ: Եզրափակելով, Կառավարությունը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում տեղի չի ունեցել:

2. Դատարանի գնահատականը

135. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետը սահմանում է ազատությունից զրկելու թույլատրելի հիմքերի սահմանափակ ցանկ, որը պետք է խիստ ձևով մեկնաբանվի և ազատությունից զրկելու ոչ մի դեպք չպետք է համարվի օրինական, եթե այն չի սահմանվում այդ հիմքերով (տե՛ս, ի թիվս այլոց, *Ciulla v. Italy*, 1989 թվականի փետրվարի 22, § 41, Շարք Ա թիվ 148, և *Saadi v. the United Kingdom* [ՄԴ], թիվ 13229/03, § 43, ՄԻԵԴ 2008):

136. Անձին կարելի է կալանավորել 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի համաձայն միայն քրեական վարույթի համատեքստում անձին համապատասխան իրավական մարմնի մոտ տանելու նպատակով նրա կողմից հանցանք կատարելու կասկածանքի հիման վրա (տե՛ս, *Jėčius v. Lithuania*, թիվ 34578/97, § 50, ՄԻԵԴ 2000-IX, և *Włoch v. Poland*, թիվ 27785/95, § 108, ՄԻԵԴ 2000-XI): Բացի փաստացի կողմը հաշվի առնելուց, որը հիմնական քննարկման առարկան է հանդիսանում, նման կասկածի լրացուցիչ պահանջները, որ փաստերը պետք է հիմնավոր լինեն, համաձայն ներպետական իրավունքի, կարող է պատճառաբանված կերպով համարվել քրեական արարք: Այսպիսով, հստակորեն չի կարող լինել «հիմնավոր կասկած» այն դեպքում, երբ արարքները, որոնք սահմանվել են կալանավորված անձի նկատմամբ չի սահմանում հանցակազմ այն ժամանակ, երբ կատարվել են այդ արարքները (տե՛ս, *Kandzhov v. Bulgaria*, թիվ 68294/01, § 57, 2008 թվականի նոյեմբերի 6):

137. Դատարանը, հետևաբար, պետք է քննի այն հարցը, թե արդյոք դիմումատուների ձերբակալումը և կալանքը եղել են “օրինական” համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի և արդյոք նրանց՝ ազատությունից զրկելը հիմնված է եղել իրենց կողմից կատարած “հանցանքի” հիմնավոր կասկածի վրա:

138. Դիմումատուները Եհովայի վկաներ են, ովքեր իրականացրել են այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, բայց ընտրել են ինքնակամ լքել իրենց ծառայությունը՝ պնդելով, որ ծառայությունը իրականում քաղաքացիական չի եղել: Նրանց, հետևաբար, մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 361-րդ և 362-րդ հոդվածներով, որը պատիժ է սահմանում դասալքության և զինվորական ծառայությունը ինքնակամ լքելու

համար: Դիմումատուներից շատերը պահվել են նախնական կալանքի վայրերում, իսկ մնացածը ազատությունից զրկվել են իրենց առաջադրված մեղադրանքների հետևանքով, ովքեր մնացել են կալանավորված նաև իրենց մեղադրանքը վերացվելուց հետո:

139. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ դիմումատուները կատարել են վերոնշյալ արարքները՝ այլընտրանքային ծառայություն վայրը ինքնակամ լքելը, ըստ Հայաստանի օրենսդրության չի համարվել հանցանք: Նման հանցանք ներառվել է ՔՕ-ում միայն 2006 թվականի հունիսի 1-ից, որը ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ին, իսկ սա հաջորդում է սույն գործի հանգամանքներին: Սա իրականում սահմանվել է ներպետական մակարդակում, մասնավորապես Գլխավոր դատախազի կողմից, ով այս հիմքերով դիմումատուների գործերը ներպետական դատարաններում լրացուցիչ քննության ուղարկելուց հետո, որոշեց դադարեցնել դիմումատուների քրեական վարույթները (տե՛ս, վերոնշյալ § 101): ՔՕ-ի 361-րդ և 362-րդ հոդվածները վերաբերել են միայն ծառայություն իրականացնողներին և սխալմամբ են կիրառվել դիմումատուների նկատմամբ (տե՛ս, նաև վերոնշյալ §§ 110-113): Փաստորեն, դիմումատուների այն արարքները, որոնց համար նրանք մեղադրվել են և որոնք հիմք են հանդիսացել նրանց կալանքի համար, տվյալ ժամանակահատվածում գործող ներպետական իրավունքի համաձայն հանցանք չեն համարվել: Դատարանը, հետևաբար, եզրակացնում է, որ դիմումատուներին ազատությունից զրկելը հիմնված չի եղել իրենց կողմից կատարած “հանցանքի” հիմնավոր կասկածի վրա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի իմաստով: Այն փաստը, որ դիմումատուների նկատմամբ հարուցված քրեական վարույթները դադարեցվել են և որ նրանք ազատ են արձակվել, բավարար հիմք չի հանդիսանում այն եզրահանգման համար, որ դիմումատուները չեն կարող համարվել զոհ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտման իմաստով: Անօրինական կալանքի համար ներպետական մակարդակում որևէ փոխհատուցում դիմումատուներին չի տրվել և ավելին, Կառավարությունը իր առարկություններում չի ընդունում, որ դիմումատուները անօրինական կերպով զրկված են եղել ազատությունից:

140. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետը:

IV. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

141. Տասնյոթերորդ դիմումատուն բողոքել է, որ ձերբակալվելուց հետո չի տարվել դատավորի մոտ: Դիմումատուները նաև գանգատվել են, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել իրենց շարունակական կալանքի պատճառները: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որը սահմանում է հետևյալը.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»

Ա. Ընդունելիությունը

1. Տասնյոթերորդ դիմումատուի դատարան չներկայանալու վերաբերյալ պնդումը

142. Կառավարությունը պնդել է, որ տասնյոթերորդ դիմումատուն ձերբակալվելուց անմիջապես հետո ներկայացվել է դատարան: Մասնավորապես, նա ձերբակալվել է 2005 թվականի օգոստոսի 24-ին՝ ժամը 18:00-ին, և ներկայացվել է դատարան 2005 թվականի օգոստոսի 26-ին՝ ժամը 16:00-ին: Այսպիսով, նա տարվել է դատավորի մոտ մոտավորապես 46 ժամ անց, ինչը համապատասխանում է 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին:

143. Դիմումատուն պնդել է, որ ինքն անմիջապես չի տարվել դատավորի մոտ: 46 ժամը չափազանց երկար ժամանակահատված է սույն գործի հատուկ հանգամանքների պարագայում: Բացի այդ, իր կալանավորման հարցը քննած դատավորը 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով չի կարող համարվել անաչառ, քանի որ չի ներկայացրել պատշաճ պատճառներ իր կալանքի համար:

144. Դատարանն ընկալում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որպեսզի ձերբակալված անձն անմիջապես տարվի

դատավորի կամ դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի մոտ, որպեսզի հայտնաբերվի ցանկացած տեսակի վատ վերաբերմունք և նվազագույնի հասցվի անձի ազատության նկատմամբ ցանկացած չարդարացված միջամտություն (տե՛ս *Kandzhov v. Bulgaria*, թիվ 68294/01, § 65, 2008 թվականի նոյեմբերի 6): Չնայած անհապաղությունը ամեն գործի դեպքում պետք է գնահատվի դրա առաձնահատկություններին համապատասխան (տե՛ս *Aquilina v. Malta* [ՄԴ], թիվ 25642/94, § 48, ՄԻԵԴ 1999-III), միևնույն ժամանակ «անհապաղություն» հասկացության մեկնաբանության և կիրառության ճկունության սահմանները շատ նեղ են (տե՛ս *Brogan and Others v. the United Kingdom*, 1988 թվականի նոյեմբերի 29, § 62, Սերիա Ա թիվ 145-Բ): Ավելին, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձը պետք է ներկայացնի մեղադրանքի կողմից և այլ մասնակիցներից իր անկախության անհրաժեշտ երաշխիքները (տե՛ս *McKay v. the United Kingdom* [ՄԴ], թիվ 543/03, § 35, ՄԻԵԴ 2006-X):

145. Սույն գործում տասնյոթերորդ դիմումատուն տարվել է դատավորի մոտ իր ձերբակալումից ավելի քիչ, քան երկու օր, այն է՝ 46 ժամ անց (տե՛ս վերևում՝ §§65,67): Դատարանն այն կարծիքին է, որ այս ժամանակահատվածը կարող է համարվել «անհապաղ» 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Ավելին, դիմումատուն չի ներկայացրել որևէ վկայություն կամ համոզիչ փաստարկ՝ ի հիմնավորումն իր այն պնդման, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորը, որը քննել է իր կլանքի հարցը, անաչառ չի եղել: Դատարանը եզրակացնում է, որ ներկայացված նյութերում չկա որևէ բան, որը կվկայեր, որ տասնյոթերորդ դիմումատուին ձերբակալումից հետո դատարան ներկայացնելը չի համապատասխանել 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին:

146. Այստեղից հետևում է, որ գանգատի այս հատվածն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի և 4-րդ կետի համաձայն:

2. Պատճառներ չներկայացնելու վերաբերյալ պնդում

147. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

148. Դիմումատուները պնդել են, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել պատճառներ իրենց շարունակական կալանքի համար: Իրենք որևէ սպառնալիք չեն ներկայացրել կալանավորվելու համար և դատապարտվել են հանցակազմի բացակայության պայմաններում: Կալանքի բոլոր որոշումները անօրինական են եղել: Իրենց կալանավորելու համար ողջամիտ և հիմնավոր արդարացում չի եղել:

149. Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները ներկայացրել են Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պատճառները: Մասնավորապես, բավարար հիմքեր են եղել ենթադրելու, որ դիմումատուները կարող են թաքնվել, խոչընդոտել արդարադատության իրականացմանը, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց և խոչընդոտել դատավճռի կատարմանը: Դրանք նաև հաշվի են առել վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը: Դատարանները կայացրել են պատճառաբանված որոշումներ, քանի որ դիմումատուները կարող էին խոչընդոտել արդարադատության իրականացմանը, կատարել քրեական օրենքով արգելված նոր արարքներ, խախել հասարակական կարգը, ինչպես նաև ծառայել վատ օրինակ այլ զինծառայողների և այլընտրանքային զինվորական ծառայության իրականացնող այլ անձանց համար:

150. Դատարանը նշում է, որ այս բողոքը վերաբերում է կալանքի այն նույն ժամանակահատվածին, որն արդեն ճանաչվել է չպատճառաբանված և 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ կիրառված: Այսպիսով, Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին անդրադառնալ այս բողոքին:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

151. Դիմումատուները բողոքել են, որ իրենց մերժել են տրամադրել բարոյական վնասի փոխհատուցում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ներքո իրենց իրավունքների խախտման համար: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը, որը սահմանում է հետևյալը.

«5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Ա. Ընդունելիությունը

152. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի::

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

153. Դիմումատուները պնդել են, որ ներպետական օրենսդրությունը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտմամբ չի սահմանում հայցի ուժով օժտված ոչ նյութական բնույթի փոխհատուցման իրավունք:

154. Կառավարությունը պնդել է, որ այն փաստը, որ դիմումատուներին հասանելի չի եղել ոչ նյութական վնասի դրամական փոխհատուցում, չի նշանակում, որ նրանք զրկված են եղել փոխհատուցումից: Այսպես, Գլխավոր դատախազը պաշտոնական նամակով ներողություն է խնդրել նրանցից, ինչը նույնպես կարող է դիտարկվել որպես նրանց պատճառված բարոյական վնասի փոխհատուցում:

2. Դատարանի գնահատականը

155. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, թե որ դեպքերում է հասանելի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի խախտմամբ ազատությունից զրկելու համար տրվող փոխհատուցումը: 5-րդ կետով սահմանված՝ փոխհատուցում ստանալու իրավունքը ենթադրում է, որպեսզի ներպետական իշխանության կամ Կոնվենցիոն մարմինների կողմից արձանագրվի մյուս կետերից որևէ մեկի խախտում (տե՛ս, ի թիվս այլոց, *N.C. v. Italy* [ՄԴ], թիվ 24952/94, § 49, ՄԻԵԴ 2002-X):

156. Սույն գործում Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում: Հետևաբար, 5-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի է դիմումատուների նկատմամբ:

157. Դատարանը նշում է, որ 5-րդ հոդվածի երաշխիքների խախտման արդյունքում պատճառված տագնապի, անհանգստության և հիասթափության համար ոչ նյութական բնույթի փոխհատուցման բացակայությունը նախկինում Դատարանի կողմից ճանաչվել է այդ հոդվածի 5-րդ կետի խախտում (տե՛ս *Pavletić v. Slovakia*, թիվ 39359/98, § 96, 2004

թվականի հունիսի 22). Իսկապես, 5-րդ հոդվածի 5-րդ կետը չպետք է մեկնաբանվի որպես բացառապես դրամական բնույթի փոխհատուցման իրավունքի տրամադրում, բայց միևնույն ժամանակ պետք է նախատեսի նման իրավունք ցանկացած տազնապի, անհանգստության և հիասթափության համար, որոնք կարող են անձին պատճառվել 5-րդ հոդվածի այլ դրույթների խախտման արդյունքում:

158. Դատարանը նշում է, որ Հայաստանի օրենսդրությունը գործի քննության ժամանակահատվածում չի սահմանել պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունք՝ այդ թվում նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի առաջին չորս կետերից որևէ մեկի խախտման հետևանքով պատճառված: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգիրքը արդարացվածին տալիս է միայն նյութական վնասի համար փոխհատուցում ստանալու հնարավորություն: Նույն կերպ, այն պարագայում, երբ Քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածը սահմանում է անօրինական կալանքի արդյունքում պատճառված վնասի փոխհատուցում, նույն օրենսգրքի 17-րդ հոդվածը այդպիսի փոխհատուցումը սահմանափակում է միայն նյութական վնասի փոխհատուցմամբ, ինչպիսիք են կատարված ծախսերը կամ բաց թողնված օգուտը: Հետևաբար, օրենքի ուժով կամ պրակտիկայով դիմումատուները չեն ունեցել 5-րդ հոդվածի 5-րդ կետի իմաստով հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունք:

159. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը:

VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

160. Դիմումատուները, վերջապես, ներկայացրել են մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ և 9-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների ներքո:

161. Իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը հաշվի առնելով և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատազորության ներքո՝ Դատարանը գտնվում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք: Այսպիսով հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի:

VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

162. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնաս

163. Դիմումատուները պահանջել են համապատասխանաբար հետևյալ գումարները՝ որպես նյութական և ոչ նյութական վնասների փոխհատուցում.

- (ա) առաջին դիմումատու՝ 1,085 եվրո և 21,000 եվրո,
- (բ) երկրորդ դիմումատու՝ 1,085 եվրո և 22,000 եվրո,
- (գ) երրորդ դիմումատու՝ 872 եվրո և 14,000 եվրո,
- (դ) չորրորդ դիմումատու՝ 530 եվրո և 13,500 եվրո,
- (ե) հինգերորդ դիմումատու՝ 1,698 եվրո և 21,000 եվրո,
- (զ) վեցերորդ դիմումատու՝ 669 եվրո և 22,000 եվրո,
- (է) յոթերորդ դիմումատու՝ 1,798 եվրո և 22,000 եվրո,
- (ը) ութերորդ դիմումատու՝ 1,141 եվրո և 22,000 եվրո,
- (թ) իններորդ դիմումատու՝ 1,557 եվրո և 22,000 եվրո,
- (ժ) տասներորդ դիմումատու՝ 1,559 եվրո և 18,000 եվրո,
- (ի) տասնմեկերորդ դիմումատու՝ 591 եվրո և 21,000 եվրո,
- (լ) տասներկուերորդ դիմումատու՝ 849 եվրո և 13,500 եվրո,
- (խ) տասներեքերորդ դիմումատու՝ 637 եվրո և 13,000 եվրո,
- (ծ) տասնչորսերորդ դիմումատու՝ 1,898 եվրո և 21,000 եվրո,
- (կ) տասնհինգերորդ դիմումատու՝ 980 եվրո և 21,000 եվրո,
- (հ) տասնվեցերորդ դիմումատու՝ 1,183 եվրո և 14,000 եվրո,
- (ձ) տասնյոթերորդ դիմումատու՝ 943 եվրո և 21,000 եվրո:

Ներկայացված նյութական վնասները ներառել են ենթադրյալ ճանապարհորդական, սննդի և բժշկական օգնության ծախսերը, որոնք իրենք և իրենց բարեկամները կատարել են իրենց անօրինական կալանքի հետևանքով, ինչպես նաև բաց թողնված օգուտը:

164. Կառավարությունը պնդել է, որ կալանքի ընթացքում դիմումատուներին պետական միջոցների հաշվին տրամադրվել է սնունդ և անհրաժեշտության դեպքում՝ ցանկացած տեսակի բժշկական օգնություն: Այսպիսով, որևէ այլ լրացուցիչ ծախսեր չեն կարող համարվել անհրաժեշտ: Ամեն դեպքում, դիմումատուները իրենց պահանջներին չեն կցել որևէ հավաստող փաստաթուղթ: Բացի այդ, բաց թողնված օգուտի վերաբերյալ նրանց պահանջը մտացածին է: Վերջապես, Կառավարությունը առարկել է ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ նրանց ներկայացրած պահանջների դեմ:

165. Դատարանը նշում է, որ նյութական վնասի վերաբերյալ դիմումատուների պահանջները չեն հաստատվում որևէ ապացույցով: Այդ պատճառով Դատարանը մերժում է այս պահանջները: Մյուս կողմից, այն կարծում է, որ հայտնաբերված խախտումների արդյունքում դիմումատուներին, անկասկած, պատճառվել է ոչ նյութական վնաս և որոշում է դիմումատուներից յուրաքանչյուրին շնորհել 6,000-ական եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսեր և ծախքեր

166. Դիմումատուները նաև պահանջել են 38,000 եվրո՝ ներպետական դատարաններում կատարված և 10,850 եվրո՝ Դատարանում կատարված ծախսերի և ծախքերի համար:

167. Կառավարությունը պնդել է, որ ծախսերի և ծախքերի վերաբերյալ դիմումատուների պահանջները հիմնավորված չեն պատշաճ փաստաթղթերով, և նրանք չեն ապացուցել, որ այդ ծախսերն իսկապես կատարվել են: Դիմումատուների կողմից ներկայացված հաշվարկները չեն կարող դիտարկվել որպես կատարված վճարման կամ ապագայում նման վճարում կատարելու վերաբերյալ նրանց և նրանց փաստաբանների միջև ձեռք բերված համաձայնության ապացույց: Ավելին, փաստաբանների վճարները ուռճացված են, անհամաչափ և անհիմն: Վերջապես, փաստաբանների աշխատանքի մի մասը վերաբերում է այն բողոքներին, որոնք ճանաչվել են անընդունելի:

168. Համաձայն դատարանի նախադեպային իրավունքի, դիմումատուն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք միայն այն դեպքերում, եթե ապացուցվում է, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար կատարվել են և եղել են խելամիտ: Բացի այդ, դատական ծախսերը վերականգնվում են միայն այն ժամանակ, երբ դրանք վերաբերում են հայտնաբերված խախտմանը (տե՛ս *Beyeler v. Italy* (արդարացի

փոխհատուցման մասին որոշում) [ՄՊ], թիվ 33202/96, § 27, 2008 թվականի մայիսի 28): Սույն գործում, հաշվի առնելով իր տրամադրության ներքո գտնվող փաստաթղթերը և վերը նշված չափանիշները, Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուներին միասնաբար վճարել 10,000 եվրո գումար՝ որպես կատարված բոլոր ծախսերի փոխհատուցում:

Գ. Հկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույք

169. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ.

1. *Որոշում է* մերժել երրորդ, չորրորդ և տասնութերորդ դիմումատուների տուժողի կարգավիճակի, ինչպես նաև իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության փաստարկները:

2. *Հայտարարում է* բոլոր դիմումատուների՝ բացառությամբ տասներորդ և տասնմեկերորդ դիմումատուների, բողոքները՝ իրենց կողմից հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության, շարունակական կալանքի համար հիմնավոր և բավարար պատճառների և հայցի ուժով օժտված ոչ նյութական բնույթի վնասի փոխհատուցման իրավունքի բացակայության մասով ընդունելի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի, 3-րդ և 5-րդ կետերի ներքո, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում:

4. *Վճռում է*, որ անհրաժեշտություն չկա գանգատը քննել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի ներքո:

5. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

6. Վճռում է, որ՝

ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուներին պետք է վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող Պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

(i) 6,000 եվրո (վեց հազար եվրո) յուրաքանչյուր դիմումատուին՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,

(ii) 10.000 (տաս հազար եվրո) եվրո միասնաբար բոլոր դիմումատուներին՝ գումարած նշված գումարի վրա դիմումատուներին վճարվող գումարից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ,

7. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հունիսի 12-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Սանտիագո Քեսադա
Քարտուղար

Ջոզեփ Կասադեվալ
Նախագահ